նրա ծածկամտութիւնից: Նա բաւական սառն կերպով պատասխանեց. «միթէ՞ չգիտես, որ հայերը սիրում են գաղթականութիւն, միթէ՞ չգիտես, որ գաղթականութիւնը մեր ազգի կեանքում մի պատմական երեւոյթ է, որ կրկնոել է ամէն դարերում եւ շարունակւում է մինչեւ այսօր: Ուրեմն, մեզ պէտք չէ՞ ուսումնասիրել գաղթականութեան պայմանները, նրա հետեւանքները, մի խօսքով, նրա բոլոր լաւ եւ վատ կողմերը: Եւ որտե՞ղ կարող ենք աւելի հիմնաւոր կերպով ուսումնասիրել, եթէ ոչ այստեղ, որ գաղթականների մի ընդարձակ աշխարհ է»:

— Ես Կարօի նամակի պատասխանը գրեցի, յայտնելով գլխաւորապէս այն միտքը, թէ նա մեր երկու բարերարների՝ որսորդ Աւօյի եւ մստեր Ֆիշերի, յոյսերը արդարացրած չի լինի, եթէ չի վերադառնայ իր հայրենիքը եւ իր ստացած ուսումը իր հայրենակիցների օգտին չի ծառայեցնի եւ այլն: Ինչպէս երեւում է, իմ նամակը ազդել էր նրա վրայ: Ամիս չանցաւ, նա կրկին յայտնոեցաւ Նիւ-Եօրքում եւ իր բարեկամներին մեծ ուրախութիւն պատճառեց: Բայց նա այլեւս առաջոայ Կարօն չէր: Յաճախ տեսնում էի նրան լուռ, մտախոհ եւ վրդովուած տրամադրութեան մէջ: Ի՞նչ էր պատահել նրա հետ: Այդ մասին ոչինչ չէր ասում: Ինձ թւում էր, որ նա մինչեւ անգամ աշխատում էր խոյս տալ ինձանից, եւ աւելի տեսակցում էր Ռափայէլի ու Սագօի հետ: Մի անգամ երեքն էլ եկան ինձ մօտ: Իսկոյն հասկացայ, որ մի բան կայ: Մի քանի րոպէ լուռ մնացին, յետոյ Կարօն ասաց. «մենք գնում ենք»: «ո՞ւր — հարցրի ես զարմանալովէ: «բաւական է, որքան մնացինք այստեղ, գնում ենք մեր հայրենիքըէ: Ես մտածեցի, որ դրանք որքան կարող էին սովորել, սովորեցին, եւ եթէ աւելի եւս մնալու լինէին, գուցէ մի ուրիշ հոսանքի մէջ կընկնէին, այդ պատճառով ես էլ բարւոք համարեցի, որ գնան: «մստեր Ֆիշերը իմանո՞ւմ է», — հարցրի ես: «իմանում էէ, — պատասխանեց Կարօն: «Իսկ դու մեզ հետ չե՞ս գալոէ: Ես բացատրեցի, որ ինձ անկարելի է նրանց հետ ուղեկից լինել, որովհետեւ դեռ մի տարի մնում է, մինչեւ մասնագիտութիւնս կը վերջացնէի: «Ո՞ր ճանապարհով էք գնումէ, — հարցրի ես: «այն ճանապարհով, որ բերեց մեզ այստեղէ, — պատասխանեց Կարօն խորհրդաւոր ձայնով: «Ուրեմն Հնդկաստանո՞վ, Աւղանիստանո՞վ», — կրկնեցի իմ հարցը: «Այո՛», — ասաց Կարօն:

— Այդ խօսակցութիւնից մի շաբաթ յետոյ, Նիւ-եօրքի հիւրանոցներից մէկում ճաշ էր պատրաստուած: Սեղանի շուրջը բոլորել էին այն ընտանիքները, որ որդեգրել էին մեզ եւ որոնց բարերարութեամբ մենք ուսում ստացանք: Նրանց թւումն էր եւ մստեր Ֆիշերը: Անկարելի էր նկարագրել ազնիւ ծերունու ուրախութիւնը: Նա այնօր պէտք է ճանապարհ դնէր իր սրտին